

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Ն ՈՒ Է Ր Ն Ե Ր

Շնորհակալությամբ և օրհնությամբ կ'արժանագրենք 1982 թվականի ընթացքին Ս. Յակոբյանց Մայր Յանարին և այլ Սրբազայեհուն եղած հեռուկա բարեպաշտական ճուղերը:

1. — Երեսուղեմարնակ Տիկին Մարիամ Շէօմէլեանէ՝ Ս. Յակոբյանց Մայր Տաճարի արտաքին երկու գոներու հաստ վարագորյններ:

2. — Լոս-Անճէլըսէն Տիկին Ազնիւ Պիլէմճեանէ՝ Կորփուրայ մը:

3. — Բեթղեմէն Այրի Տիկին Լուսա-ծին Սեթոյեանէ՝ Հալէպի ձեռագործ վարագորյն մը Ս. Աստուածածնայ պատկերին համար:

4. — Պէյրուսէն Օր. Մայրա Տարազ-եանէ՝ Աւետարանի բռնիչ մը:

5. — Երեսուղեմարնակ Տիար Յակոբ Անդրէասեանէ՝ երկու յախճապակեայ աշտանակներ Ս. Գլխադրի գործածութեան համար:

6. — Երեսուղեմարնակ Տիար Նազարէթ Տէր Վարդառնեանէ՝ փրօն մը և հինգ արծաթեայ ճարձանդներ Ս. Յակոբյանց Տաճարի գործածութեան համար:

ԳՐԵԳՐԻՆ ՌԲԵՊՍ. ԳՈՋԱՆՃՅԱՆ

Լուսարարուպետ Ս. Արուստ

ԳՆԲԸ. Յ. ԹՈՐԳՈՒՄ ԱՐԲԵՊՍ. ՄԱՆՈՒԿԱՆ ՍԵՐ ՄԷՋ

30 Նոյեմբեր, Երեքշաբթի մթնշաղիք. Ս. Աթու ժամանեց Ս. Ուխտի Միարան և Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի բաղամասայ Առաջնորդ Գերշ. Տ. Թարգոմ Արքեպոս. Մանուկեանը: Իրեն կ'ընկերանային արտասահման, և ի մասնաւորի Միացեալ Նահանգներ, պաշտօնավարող հետեւեալ Միարան Հայրերը. — Հոգշ. Տ. Վարսէման Ե. Վրդ. Գապարեանէն՝ Նիւ յաւիթէն, Հոգշ. Տ. Լիւսն Վրդ. Արէլեան՝ Օքլէնտէն (Գալիֆ.), Հոգշ. Տ. Գեղամ Ե. Վրդ. Զաքարեան՝ Գանատայէն, Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշեան՝ Փարիզէն, Հոգշ. Տ. Վալէ Ե. Վրդ. Իգնատիոսեան՝ Մարտլլէն, Հոգշ. Տ. Ղեւոնդ Ե. Վրդ. Սամարեան՝ Լէճոնկիթնէն, Հոգշ. Տ. Վիգէլ Վրդ. Այթաղեան՝ ժընէն, Հոգշ. Տ. Խաժակ Վրդ. Պարոտեան՝ Նիւ Եթէքէն, Հոգշ. Տ. Մուշեղ Վրդ. Թաշեան՝ Փաստաշէնայէն (Գալիֆ.), Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ. Մելքոնեան՝ Հէյ-վըրհիլէն և Հոգշ. Տ. Եղնիկ Արդ. Պաշեան՝ Նիւ Եթէքէն (Ուսանող Աստուածաբանութեան):

Գերաշնորհ Սրբազանն ու իր հետեւորդները շնորհակալութեամբ գործեցին Մայր Տաճար և Կատարեցին իրենց աւխտը Ս. Գլխադրի մատան մէջ: Ապա, Առաջնորդ Սրբազանը, դառն մէջ, արտասանեց եկեղեցւոյ մատաքի սաղմոսը: Յետոյ բոլորն ալ, Միարանեթեան Սաղմոսարանի անդամներուն հետ, Թափօրով բարձրացան Պատրիարքարան և ողջագոհութեան ձմեն. Ս. Պատրիարք Հօր հետ:

Արտասահմանի Միարանակից մեր Եղբայրները աւելի քան երկու շաբաթներ ապրեցան Ս. Աթուայ հովանիին տակ, հոգեւորապէս մխիթարուելով և իրենց ուխտի պատարագները մատուցանելով Տնօրինական Սրբազայեհուն մէջ: Միւսներէն ժառ, 20 Դեկտեմբեր, Երկուշաբթի առաւօտուն, Գերաշնորհ Սրբազանը վերադարձաւ իր պաշտօնատեղին: